

«Վէմ»-ի ղեկավար սկզբունքն
է լինելու գիտական
առարկայականութիւնն
ու ճշմարտութիւնը,
միայն ճշմարտութիւնը,
ամբողջ ճշմարտութիւնը՝
համոզած, որ անգամ ամենադառն
ճշմարտութիւնը աւելի օգտակար է,
քան ոսկեզօծ ու շաքարապատ
սուտը»:

Սիմոն Վրացեան

Խմբագիր՝ ԳԵՎՈՐԳ ԽՈՒԴԻՆՅԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆ

Վլադիմիր Բարխուդարյան
Սերգեյ Սարինյան
Աշոտ Մելքոնյան
Ռուբեն Սաֆրաստյան
Ալբերտ Ստեփանյան
Սուրեն Դանիելյան
Համլետ Պետրոսյան
Սամվել Մուրադյան
Լևոն Մկրտչյան

ՍՓՅՈՒՌ

Երվանդ Փամբուկյան – Լիբանան
Մկրտիչ Մկրտչյան – Լիբանան
Հարություն Քյուրքչյան – Հունաստան
Կարո Արմենյան – ԱՄՆ
Ռուբինա Փիրումյան – ԱՄՆ
Վաչե Բրուտյան – ԱՄՆ

համահայկական հանդես
է (ԺԳ) տարի, 2015,
թիվ 2 (50), ապրիլ-հունիս

«Վէմ» համահայկական հանդես
Հրատարակիչ՝ «Վէմ հանդես» ՍՊԸ

375010 Երևան, Մհեր Մկրտչյան փ. 12/1
հեռախոս՝ 52 18 76, 093 83 93 24

Էլ. փոստ՝ khoudinyan@yahoo.com

Ինտերնետային կայք՝
vemjournal.org

ISSN 1829 – 1864



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՆՑՑԱԼԻ ԳԻՏԱԿՑՄԱՆ ՊԱՇՏՈՐ 3

ՄՈՒՏՔ

Գայանե Ս. Մկրտումյան
ԻՍԼԱՄԸ ԵՎ ՀԱՅԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ
Մոտիվմամադ մարգարեին և Ալի իբն
Աբու Տալիբ խալիֆային վերագրված
դաշնագրերում 8

Կարեն Հ. Խանյարյան (Թեհրան)
«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԿԱՑՈՒԹՅԱՆ ՈՂԻՍԱԿԱՆԸ
16-20-րդ դարերի օսմանյան
հրատարակություններում 27

ԱՋԴԱԿՆԵՐ

Սամվել Ա. Պողոսյան
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԿԻԼԻԿԻԱՅԻ
ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
Ռուսական դիվանագիտության
1914-1915 թթ. գաղտնի ծրագրերում 59

Ռոբերտ Օ. Սահակյան
ԳԵՐՄԱՆԻԱՆ ԵՎ ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 78

Գևորգ Ս. Խոշիկյան
ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՈՏՈՒ ԽԱՐԽԼՈՒՄԸ
ԵՎ Հայ Դատի նոր մարտահրավերները 89

ՎԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայկանուշ Ա. Շարոքյան
ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԱԴԱՏՈՒՄԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ
ԳՐՈՂՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ 102

ԿՈՐՈՒՄՏՆԵՐ

Գեղամ Մ. Բաղայան
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱ-
ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՄԵԾ
ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵԻՆ
Մաս առաջին: Վանի վիլայեթի
կենտրոնական, հյուսիսային և
արևելյան գավառները 112

Արմեն Յ. Մարոքյան
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ.
ՈՒՆԵԶՐԿՈՒՄԻՑ ՀԱՏՈՒՑՈՒՄ 144

Լևոն Բ. Չուգասյան
ՎԱՆԱ ԼՃԻ ԼԻՄ ԿՂՋՈՒ ՓՐԿՎԱԾ ՈՒ ԿՈՐԱԾ
ԳԱՆՁԵՐԸ
Դրվագներ հայ արծաթագործության
պատմության 172

ԻՄԱՍՏ

Գրիգոր Յ. Պըլյուեան (Փարիզ)
ՊԱՍՈՂ ԲԱՌԸ՝
Նախքան Ցեղասպանության յղացքի
մշակումը 196

Ռուբինա Բ. Փիրումեան (Լոս Անջելես)
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է
ԱՆԵՐՆԵՐ ԳՈՐԾԵԼ ՎԵՐԱՊՐՈՂ ՍԵՐՈՒՆՆԵՐԻ
ԽՈԳԻՆԵՐՈՒՄ 222

ՊԱՏԳԱՄ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ
ՏԱՐԵԼԻՑԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՉԱԿԱԳԻՐ 245

ԳԻՏԱԿՑՈՒՄ

Դավիթ Ռ. Մոսիսյան
ԵՂԵՌՆԻ ՄՏԱԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ
Նախապատմությունից դեպի
պատմություն 249

CONTENT 261

СОДЕРЖАНИЕ 262

Ռուբինա Բ. Փիրումեան (Լոս Անջելես)
Միջին Արևելեան Լեզուների և Մշակույթների Դոքտոր

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է

Աւերներ գործել վերապրող սերունդների հոգիներում*

Բանալի բառեր – ցեղասպանություն, սփիւռքահայ գրականություն, ազգային ինքնություն, երկություն, Եղեռնի ազդեցությունների փոխանցում, փոխանցուող վարակ, գենետիկ փոխանցում, ծնող-զաւակ յարաբերություն, յուշագրություն, պատմական յիշողություն, ձուլում, ստորակայութեան բարդոյթ, յիշողութեան բեռ, ոճրի ուրացում, զոհի հոգեբանություն, լեզուասպանություն (Linguicide):

Բաւական խորը ուսումնասիրուած նիւթ է և փաստուած իրողութիւն, որ Ցեղասպանութիւնը վերապրած սերունդը իր ամբողջ կեանքը ապրել է Եղեռնից անցած իր սոսկալի յուշերի ոստայնի մէջ բանտուած: Թուրքի ու քուրդի աներևակայելի վայրագութիւնների, կոտորածի, տեղահանութեան, կողոպուտի, սովի, ծարաւի, հարազատի կորստի պատճառած ցաւի ազդեցութիւնը նրա հոգում բացել է անբուժելի մի վերք ու ազդել նրա ընտանեկան և ընկերային կեանքի վրայ, ձևաւորել նրա աշխարհընկալումը, նրա ինքնութիւնը¹:

Այն, ինչ որ այս յօդուածի սահմաններում պիտի փորձենք վեր հանել ու վերլուծել, **այդ ազդեցութիւնների փոխանցումն է երկրորդ սերնդին:** Պիտի ցոյց տանք, որ **դա որևէ աղերս չունի այն բանին, թէ վերապրողը ինչպէս է վերաբերուել իր աղիտալի անցեալի հետ**, կամ **նրա կազմած ընտանիքում որքան է խօսուել, կամ բոլորովին չի խօսուել այդ անցեալի մասին**, կամ **այդ ընտանիքում մեծացող սերունդը ինչ վերաբերմունք է ցուցաբերել իր ծնող(ներ)ի անցեալի նկատմամբ**²: Ազդեցութիւնը փո-

*Ընդունուել է տպագրութեան 2.06.2015:

1 Կատարուած ուսումնասիրութիւնների շարքում յիշենք մեր հեղինակութեամբ լոյս տեսած երեք աշխատասիրութիւն՝ *Literary Responses to Catastrophe, A Comparison of the Armenian and the Jewish Experience* (248 էջ, 1993), *And Those who Continued Living in Turkey after 1915, The Metamorphoses of the Post-Genocide Armenian Identity as Reflected in Artistic Literature* (286 էջ, 2008, 2012), և *The Armenian Genocide in Literature, Perceptions of those who Lived Through the Years of Calamity* (492 էջ, 2012, 2014):

2 Ընդհանուր գծերով, այս նիւթը զլխաւոր թեման է հրատարակման գործընթացում գտնուող աշխա-

խանցում է այնուամենայնիւ:

Հայոց Ցեղասպանութիւնը վերապրած սերունդը³ Նոր Աշխարհի իր նոր կեանքում իր համեստ բոյնը շինեց: Փորձեց ստեղծել ընտանեկան այնպիսի միջավայր, ուր երեխաները մեծանային առողջ և ուրախ, առանց դեռ արիւնող վերքի, որ իրենց կեանքի ընկերն էր եղել: Բայց մեծ մասամբ չյաջողեցին: Նրանց ստեղծած ընտանեկան միջավայրը խիստ էր և անուրախ: Ֆրանսահայ ժանին Ալթունեանը վկայում է, որ իրենց տան մէջ ապրելու ուրախութիւնը ընդհանրապէս մոռացում հարց էր, «un foyer ou la joie de vivre n'était guère à l'ordre du jour.»⁴: The Immigrants' Daughter-ի հեղինակ Մերի Թերզեանը գրում է նման ընտանիքում տիրող մթնոլորտի և դրա ազդեցութեան մասին, այս անգամ Կահիրէում. «Ցեղասպանութեան ազդեցութիւնը ամկայ էր մօրս ապակէ հայեացքում և հօրս զայրացկոտ բնավորութեան մէջ: Դա մեզ բոլորիս ազդեց և երևի կը շարունակի ազդել դեռ գալիք մի քանի սերունդների վրայ»⁵: Նոյնաման երևոյթներ անշուշտ կարելի է տեսնել հրէական Ողջակիզումը վերապրած սերնդի ընտանեկան կեանքում: Երկրորդ սերունդը վկայում է այդ մասին: Նաւա Սեմելը իր սերնդին համարում է «տխուր մարդկանց երեխաներ, մարդիկ, ովքեր մոռացել են ուրախութեան ինչ լինելը»⁶: Մենք այս յօդուածում չենք փորձելու հայ և հրեայ երկրորդ սերնդի փորձառութիւնների բաղդատականը կատարել: Դա դուրս է յօդուածի սահմաններից. սակայն գիտենք, որ դա հետաքրքիր բացայայտումների պիտի յանգէր, քանզի այնքան շատ են զուգահեռ երևոյթները:

Աղիտալի անցեալի պատճառած ցաւը (trauma) ծնողից զաւակին է անցել: Հոգեվերլուծաբանները հաստատում են դա: Զաք Դանիէլեանը իր հետազօտութիւններից ելած, եզրակացնում է. «Աղիտալի դէպքի պատճառած ցաւը (trauma) վարակիչ է և այդ վարակը կարող է շատ վնասաբեր լինել: Բոլոր նրանք, ովքեր շփում են այդ վարակի հետ, ազդուում են դրանից, դրանք կարող են լինել աղէտի անմիջական զոհերը, նրանց ընտանիքները, նրանց երեխաները»⁷:

տութեանս, որ պիտի կոչուի The Armenian Genocide in Literature, The Second Generation Responds:

3 Կարևոր է յիշեցնել, որ այս ուսումնասիրութիւնը կատարուած է Սփիւռքի գաղթածայիները ի նկատի ունենալով: Հայաստան հասած և մի քանի տարի յետոյ խորհրդային վարչակարգի ճնշումներին ենթարկուած գաղթականութիւնը բոլորովին այլ ձակատագիր ունեցաւ. ներքին և արտաքին ճնշումների ազդեցութեան դաշտում, ուրեմն՝ աղիտալի անցեալի ազդեցութիւնը և պատմական յիշողութեան փոխանցումը յաջորդ սերնդին միանգամայն այլ յարացոյցի հետևեցին: Այդ թեմայի մասին զեկուցումն տես **Ռուբինա Փիրումեան**, "The Memory of Genocide in Soviet Armenian Literature," էջ 233-248, «Բանբեր Սատենադարանի» N 21, 2015: Այս յատուկ համարում ընդգրկուած են երևանում անցկացուած և Մատենադարանի համագործակցութիւնը վայելող Հայագիտական ուսումնասիրութիւնների միջազգային ընկերակցութեան (AIEA) 13-րդ համաժողովի (2014, հոկտեմբերի 9-11) նիւթերը:

4 Տես **Վահրամ և Ժանին Ալթունեան**, Mémoires du génocide arménienne, Héritage traumatique et travail analytique, (Paris: Presse universitaire de France, 2009): Գրքում կարևոր տեղ ունի Ժանին Ալթունեանի յօդուածը, "Parcours d'un écrit de survivant", (էջ 113-147), որ պարփակում է հեղինակի փորձը հասկանալու հօրը և վերլուծելու Ցեղասպանութեան շուրջ տակ ապրած իր կեանքը նրա հետ: Մէջբերումը էջ 118-ից:

5 **Մերի Թերզեան**, The Immigrants' Daughter: A private battle to earn the right to self-actualization (Printed in the United States of America, 2005), էջ xiv:

6 **Նաւա Սեմել**, "Intersoul Flanking, Writing about the Holocaust", էջ 66-71: Զօդուածը տեղ է գտել Second Generation Voices, Reflections by Children of Holocaust Survivors & Perpetrators հատորում, **Ալան Բորգըր** և **Նէսմի Բորգըր** խմբագիրներ, (Syracuse, New York: Syracuse University Press, 2001): Մէջբերումը էջ 71-ից:

7 **Զաք Դանիէլեան**, "A Century of Silence, Terror and the Armenian Genocide," The American Journal of Psychoanalysis, 2010, 70, էջ 245-264:

Հրեական հոգեվերլուծաբանները մեծ աւանդ ունեն այս բնագաւառում: **Նաթան Փ. Ֆ. Քելլըրմանը բացատրում է, թէ ինչ եղանակներով է փոխանցումը կատարում: Նա մէջ է բերում ցայժմ առաջ բաշուած տարբեր տեսութիւններ, որոնք փոխանցումը դիտում են Փսիխո-դինամիք, ընկերա-մշակութային, ընտանեկան դրուածքի և նոյնիսկ՝ կենսաբանական տեսանկիւններից:** Այս տեսութիւնների մէջ ամենից հետաքրքիրը, որ աւելի քիչ է պեղուած և որոշ չափով մօտենում է Դանիէլեանի վարկածին, կենսաբանական կամ գենետիկ փոխանցման եղանակն է, ըստ որի՝ ծնողի ապրած trauma-ն կարող է երեխային փոխանցուել՝ ինչպէս որևէ այլ ժառանգական հիւանդութիւն, և ծայրայեղ պարագաներում երեխայի մէջ հոգեկան խանգարում կամ Post-Traumatic Stress Disorder (PTSD) առաջացնել⁸: Իսկ այդ PTSD կոչուած հոգեկան խանգարումը, ինչպէս գիտէինք նախապէս, համարում էր յատուկ՝ աղէտը վերապրած զոհին և ոչ-փոխանցելի:

Հոգեբուժներին ենք թողնում trauma-ի կենսաբանօրէն փոխանցման եղանակի և առաջացած հոգեկան խանգարման կամ Post-Traumatic Stress Disorder-ի ծայրայեղ պարագաների քննարկումը և դառնում երկրորդ սերնդի գեղարուեստական գրականութեանը՝ հաւատալով, որ ինչպէս Բեռնարդ Քոհնեն է հաստատում, «Գեղարուեստական գրականութիւնը հնարաւոր է դարձնում երեակայական ներթափանցումը մարդկային նկարագիրների ու յատկանիշների ինչպէս և հասարակական իրադարձութիւնների մէջ: Եթէ դա կատարում է հմտութեամբ և վարպետութեամբ, դա ընձեռում է ձշգրիտ և խորը իմացութիւն՝ թէ՛ մարդու նկարագրի և թէ՛ տուեալ իրադարձութեան ունեցած նշանակութեան մասին»⁹: Գեղարուեստական գրականութիւնը դառնում է արտացոլքը Հայոց Ցեղասպանութեան ազդեցութեան՝ երկրորդ սերնդի ներկայի և ապագայի վրայ: Ազդեցութիւնը փոխանցում է: Բայց թէ ինչ խորութեամբ և ինչ տարողութեամբ:

Զափորոշիչ ազդակները շատ են: Օրինակ՝ վերապրողին ապաստան տուած նոր երկրի մթնոլորտը՝ բարիացական է, թէ՛ կայ խտրականութիւն և դժկամութիւն նորեկների հանդէպ: Նրա դէմ ծառացած ամէնօրեայ գոյապայքարը որքանո՞վ է նրան կլանում: Յետոյ կայ մեկ այլ ազդակ, որ ընտանեկան յարաբերութիւններին է առնչում: Արդեօք վերապրող ծնողը իր անցեալը գաղտնի է պահել ու իր կեանքի սարսափելի պատմութիւնը ոչ մէկի հետ չի կիսել: Արդեօք վերապրող ծնողը անդադար պատմել է իր անցեալի ահաւոր պատմութիւնը ու զաւակներին ազդարարել՝ երբեք չմոռանալ: Իսկ զաւակները: Արդոք հետաքրքրուած և գիտակից էին թէկուզ սարսափելի ու անհասկանալի և ներկայի հետ անհամապատասխան այդ անցեալին, և դեռ երբեմն իրենք էլ այդ անցեալի ձիրաններում բռնուած: Թէ՛ անտարբեր էին, անհետաքրքիր դէպի այդ անցեալը և զբաղուած՝ իրենց վերելքը ապահովելու մի երկրում, ուր իրենց ծնողները խեղճ և անյաջող էին մնացել:

Այս բարդ յարաբերութիւնների համացանցում, **նախ կենտրոնանք այն ընտանիքների վրայ, ուր ծնողների սև ու տխուր անցեալը զաւակների**

8 Տե՛ս Նաթան Փ. Ֆ. Քելլըրման, "Transmission of Holocaust Trauma," ներբեռնուած է <http://yadvashem.org.il/yv/en/education/languages/dutch/pdf/kellermann.pdf> կայքից:

9 Բեռնարդ Քոհեն, The Sociocultural changes in American Jewish Life as Reflected in Selected Jewish Literature, (Ruthland, Madisson, Teaneck, NJ: St. Fairleigh Dickinson University Press, 1972), էջ 32:

համար մնաց արգիլուած ոլորտ, ընտանեկան գաղտնիք: Եւ իրօք, մեծ է թիւը այն վերապրողների, ովքեր երբեք իրենց երեխաներին չպատմեցին իրենց կեանքի մասին: Երբեմն, ամբողջովին ընկղմուած հանապազօրեայ գոյապայքարի մէջ ու առօրեայ դժուարութիւններով տարուած, առիթը չկար խօսելու: Նիւթը բացւում էր փսփսութով, հենց վերապրողների սեղմ շրջանակում և մեծ մասամբ խօսւում էր թուրքերէնով, որ անհասկանալի էր երեխաներին: Այլ պարագաներում, գուցէ վերապրող սերունդը վախենում էր արեան ու արցունքի պատումներով վնասել երեխաների դեռատի հոգիները ու նրանց փոխանցել այն սոսկալի յուշերը, որոնց սահմնկեցուցիչ շուքը ինքը կրում էր ամբողջ կեանքում: Գուցէ նրա վերապրումը պայմանաւորուած էր եղել մի անպատմելի իրողութեամբ՝ իսլամացում, բռնաբարում, թլպատում, թուրք ժանդարմին մատուցած ծառայութիւն... Ինքը կարողացել էր այդպիսով ազատուել, երբ կոտորուել էր ամբողջ ընտանիքը: Այս փորձառութեան առթած ամօթի ու յանցանքի զգացումը արգիլել էր նրան բացուել զաւակներին: Գուցէ նաև ծնող դարձած այդ վերապրողները այն թիւը կարծիքն էին ունեցել, որ անցեալը չվերյիշելով ու չպատմելով պիտի կարողանային մի կողմ դնել այն, միանգամայն մոռանալ անցեալը, վանել անցեալի շուքը ու ապաքինուել մղձաւանջերի յաճախանքից: Հաւանական է նաև, որ նոր երկրի նոր հասարակութեան հետ նոյնանալու հապճեպի մէջ, բոլորից տարբեր չընկալուելու վախից՝ անցեալը պահել էին գաղտնի: Այս վերջին պարագան աւելի համատարած է եղել Արևմտեան աշխարհում, ուր օտարները, մանաւանդ՝ նորեկները ընդունում էին դժկամութեամբ և երբեմն նոյնիսկ անհանդուրժողականութեամբ և խտրականութեամբ: Յիշուած բոլոր պարագաներում, նման ընտանիքներում ցեղասպանութեան նիւթը թաքու էր, արգիլուած թեմա:

Սյուզան Հանդլըրը, իր *The Secrets They Kept*¹⁰ աշխատութեան մէջ, շատ հոգեբանների հետ կիսում է այն համոզումը, թէ ընտանեկան գաղտնիքը, մանաւանդ եթէ դա անցեալի մի ողբերգութեան է առնչւում, կարող է վնասել ընտանիքի անդամների մտային առողջութեանը և խորտակել ընտանեկան յարաբերութիւնները: Այս իրավիճակում **աւելի խոցելի դիրքում են յայտնւում երեխաները՝ բռնուելով մի անանուն անձկութեան մէջ: Անձկութիւնը տառապանք է դառնում ու երբեմն էլ հոգեկան անհանգստութիւն առաջացնում, երբ նրանք իրենք իրենց այդ խորհրդաւոր ու անըմբռնելի, գաղտնի պահուած իրողութեան պատճառն ու պատասխանատուն են համարում:**

Երկրորդ սերնդի ստեղծած գրականութեան մէջ շատ են վկայութիւնները նման ընտանիքներում առկայ անբաղձալի և անբնական յարաբերութիւնների մասին: Վիրջինիա Յարութիւնեանը անգամներ մօրը հարց էր տուել նրա անցեալի մասին, բայց մայրը միշտ մերժել էր խօսել: Նա իր մօրը չէր ծանաչում: Տհաճութեան զգացում ունէր այդ քարի պէս սառն կնոջ հանդէպ, որ այնքան խիստ էր, որ խանդաղատանքի խօսքեր չունէր իր բերնում, ինքնամփոփ էր, մտերիմ չունէր, չէր սիրում հայկական խմբերին մաս կազմել: Նա անգամ մերժել էր պարել իր իսկ հարսանեաց հանդէսում: Orphan in the Sands ինքնակենսագրականում (1995) նա նկարագրում է այդ տհաճ մթնո-

10 Տնն Սուզան Հանդլըր, *The Secrets They Kept*, (iLane Press, 2012).

լորտը, որ փոխուեց շատ ուշ, երբ մայրը, շատ ծեր ու հիւանդ, վերջապէս տեղի տուեց ու պատմեց իր աննկարագրելի պատմութիւնը՝ տեղահանութիւն, չարչարալից ճանապարհ, սպանութիւն, կողոպուտ ու բռնաբարութիւն: Ընտանիքի անդամները կորցնում են իրար: Եօթ տարեկան աղջնակը մենակ, քաղցած, ծարաւ և հիւանդ թափառում և վերջապէս ապաստան է գտնում մի թուրքի տանը, յետոյ մի այլ թուրք, մինչև նրան յաջողում է փախչել խոշտանգումներից ու պատսպարուել Խարբերդի ամերիկեան որբանոցում: Վիրջինիան այժմ գիտէր մօր տարօրինակ բնաւորութեան սկունքների մասին, բայց ուշ էր: Իրեն մնում էր անդարմանելի խղճահարութիւն միայն:

Հելէն Փիլիպոսեանի *My Literary Prifile: A Memoir* (2010) գրական յուշագրութեան ընդմիջից երևան է գալիս նրա մօր՝ Եղսայի խստաբարոյ բնաւորութիւնը: Դրսում նա ամաչկոտ էր, անընկերական: Նուաստացուցիչ էր նրա հետ լինել, երբ նա ջղային նոպաներ էր ունենում, իսկ դա յաճախ էր պատահում: Նա շարունակ, առանց պատճառի կշտամբում ու քննադատում էր Հելէնին: Նա չէր խօսում անցեալից, իսկ Հելէնը հետաքրքրուած էլ չէր լսելու մօր պատմութիւնները: Այդուհանդերձ, այդ տարօրինակ մթնոլորտի ճնշման տակ Հելէնը հոգեկան անկման մէջ էր մտել (*severe depression*). Նոյնիսկ հոգեբուժի օգնութեան էր դիմել, որը և առիթ էր տուել մօր յաւելեալ հեզմանքին ու քննադատութեանը: Մօր և դստեր այս յարաբերութիւնը տևեց մինչև այն ժամանակ, երբ Հելէնը արդէն հասուն տարիքում և իր ընտանիքը կազմած սկսեց կարդալ հայ ժողովրդի պատմութեան այդ ողբերգական ժամանակաշրջանի մասին ու անդրադարձաւ այդ պատմութեան և իր ծնողների անցեալի առնչութիւններին: Դստեր հետաքրքրութեան և հարցումներին անսալով, մահուան շեմին հասած 91-ամեայ Եղսան բացեց իր անցեալը: Սովից կիսամեռ ճամբին փլած աղջիկը նայել էր իր մօր ետևից, որ հեռացել էր ու էլ չէր վերադարձել: Թուրք մարդը նրան առել էր ու տուն տարել: Թուրքի տանը... երևի թէ լլկուել էր խեղճ աղջիկը ու փախել: Ու Հելէնը մտածում է, երանի չէր, որ մայրը հոգեբուժի օգնութեան դիմէր: Կեանքը աւելի դիւրին կլինէր նրա հետ: Նա ցաւով է պատմում իր ծնողների ապրելակերպի ու Բոստոնի ամերիկեան կեանքին ու մշակոյթին ընտելանալու նրանց չկամութեան, նրանց յարաբերութիւնների և ջղագրգիռ արտայայտութիւնների մասին: **Նրանք իրենց երեխաներին դաստիարակել էին երկրից բերած հին սովորոյթներով ու արժէքներով: Աւանդական խիստ միջոցներով փորձել էին կաղապարել նրանց հոգին ու անհատականութիւնը. բայց դրա արդիւնքը եղել էր հոգեբանական ճակատում երեխաների ու ընդհանրապէս աշխարհի հետ:**

Ըրուին Ստաուրը, ընկերային հոգեբան, գտնում է, որ ծնողների աղիտալի անցեալը նրանց երեխաների մէջ ընդհանրապէս հոգեկան հիւանդութիւններ չի առաջացնում: Այնուամենայնիւ, հոգեկան անհանգստութիւն և այլոց հետ յարաբերելու դժուարութիւններ տեսնուած են մանաւանդ այն երեխաների մօտ, որոնց ծնողները գաղտնի են պահել անցեալը¹¹: Այս երևոյթը նուազ կամ շեշտուած չափերով պատկերուած է երկրորդ սերնդի գրա-

11 Տե՛ս Ըրուին Ստաուրի “Healing and Reconciliation” յօդուածը տե՛ս Ռիչարդ Յովհաննիսեանի խմբագրութեամբ լոյս տեսած *Looking Backward, Moving Forward, Confronting the Armenian Genocide* հատորում, (New Brunswick, U.S.A., and London, U.K.: Transaction Publishers, 2003), էջ 263–274, մէջբերումը էջ 265–ից:

կանություն մէջ:

Passage to Ararat (1976)–ի հեղինակ Մայքլ Զ. Առլենը խոստովանում է, թէ ինչպէս ինքը թէ՛ ատում և թէ՛ սիրում էր հորը ու միևնոյն ժամանակ վախենում նրանից: Վախենում էր մի ձևով ներքաշուել մի յարաբերության մէջ, յարաբերութիւն՝ հայկականության հետ, հայերի ու թուրքերի հետ, թուրքական ջարդերի և դրանց հետ եկող ամէն ինչի հետ, որ նուաստացուցիչ էր իր համար: Բայց տարիներ հոր մահից յետոյ, երբ նա աստիճանաբար ներքաշուեց հայկական իրականության մէջ և սկսեց ճանաչել իր հայու անցեալը, զարմանքով հարց տուեց ինքն իրեն. ինչո՞ւ այս ծպտանքն ու քողարկումը. ինչո՞ւ էր հայրը այդքան կրքոտ խուսափել իր ցեղի հաւաքական անցեալից, որ իր ինքնութիւնն էր:

Դէյվիդ Խերդեանի հայրը Ադանայի ջարդերից էր ազատուել: Դէյվիդը այդքանը գիտէր միայն: Հայրը լռել էր, չէր խօսել այդ մասին: Իսկ ինքն էլ, Ուիսքանսընի Ռասին քաղաքում մեծացած, ամերիկացած երիտասարդը, չէր ցանկացել, չէր կարողացել, ցաւի ու չարչարանքի այդ պատմութիւնների մէջ խորանալ: Բայց և այնպէս, դրանք կարծես մի խորհրդաւոր անդունդ էին առաջացրել հայր–և–որդու յարաբերութիւնների մէջ: Եւ անդունդը տակաւ խորացել էր ու խառնակ և կնճռոտ զգացումներ առթել՝ վախ, յարգանք, ակնածանք, բայց և օտարում ու մի տեսակ տհաճ զգացում: Ամերիկածին Դէյվիդը իր ինքնության փնտռտուքի մէջ խորշում էր այն ամէն ինչից, որ հայկական էր և իր հօրն էր ներկայացնում, նախընտրում էր ամերիկեանը: Նրա անվերջանալի վէճերը հօր հետ ամենահասարակ բաների վրայ ապացոյցն էին նրա օտարացած հոգու, որ տուայտանքի մէջ էր՝ **բռնուած երկու իրականության մէջ՝ անցեալ, որ ինքը անտեսում ու արհամարհում էր ու ներկայի աշխարհը իր շուրջ, որին փարել էր խանդավառութեամբ:** Հօր մահից յետոյ էր միայն, որ երիտասարդ Դէյվիդի սրտում սողոսկաց մի տարօրինակ զգացում՝ յետ–մահու սիրոյ, յարգանքի, նոյնիսկ յանցանքի և խղճահարության: Սկսեց կարդալ հայ ժողովրդի կոտորածների պատմութիւնը ու այնտեղ գտաւ հօր խորթ ու օտարոտի խառնուածքի արմատները: Հօրը նուիրում իր բազմաթիւ բանաստեղծութիւնները “For My Father,” Homage to Adana հաւաքածոյի մէջ և յետ–մահու նրան գրած նամակները “Letters to my Father” Forgotten Bread հատորում ներառնուած, խօսում են Խերդեանի ուշացած խղճահարության, ինքնագիտակցության և իր արմատներին վերադառնալու նրա ճիգի մասին:

Սան Ֆրանսիսքոյում հասակ նետած Էլլէն Սարգիսեան Չեսթնաթը վկայում է այն տարօրինակ և անհաճոյ զգացումի մասին, որ ունեցել էր ծնողների նկատմամբ: Այսօր Սարգիսեանը դա համարում է **ընտանեկան մթնոլորտի վրայ ճնշող Հայոց Ցեղասպանության սև ստուեր:** Նրա հայրը երբեք չկարողացաւ ձերբազատուել այդ ստուերից, որ դրսևորում էր նրա յաճախակի կատաղի ժայթքումների մէջ: Էլլէնը իր ծնողներին ընկալում էր որպէս ոչ–սովորական ու շատ տարբեր իր շրջապատի անհոգ ամերիկացիներից: Էլլէնը չկարողացաւ գտնել պատճառը այդ տարօրինակ մթնոլորտի և իր ծնողների վերաբերմունքի, ուրեմն՝ նախընտրեց հեռաւորութիւն բռնել նրանցից, հեռաւորութիւն, որին ի հարկէ հետևում է օտարումը: Բայց դրանք կիսամիջոցներ էին, որ մտքի հանգստութիւն և հոգու անդորրութիւն չբերե–

ցին էլլենին: Տարիներ յետոյ, երբ մայրը մահացել էր արդէն և հայրը հիւանդկախ ու անօգնական ծերունի, կեանքը նկարիչ, գրող, արուեստագէտ էլլենին դէպի հայ աւանդական արուեստը, ու այդ ճամբով դէպի հայ ժողովրդի անցեալը ներգրաւուեց: **Նոր բացուած աշխարհը նրան իր ընտանեկան պատմութեան տարաւ, պատմութիւն, որ մութ էր մնացել իր համար, պատմութիւն որ առանց իր գիտակցութեան իր ինքնութեան ձևաւորման մէջ մեծ դեր էր ունեցել:** Հօր հետ ունեցած իր երկարատև հարցազրոյցները հայթայթեցին նիւթը, որ ատաղձը պիտի դառնար Deli Sarkis: The Scars he Carried, A Daughter Confronts the Armenian Genocide and Tells her Father's Story (2014) –ի: Դա մի զոյգ յուշագրութիւն է, որի մէջ նկարագրուած է հօր կեանքը, ահաւոր տեսարանների ու տառապանքների ազդեցութիւնը նրա վրայ՝ հոգեկան և ֆիզիքական սպիացած վէրքի խորիրդանշումով. այդ բոլորի ազդեցութիւնը փոխանցուած զաւակներին և ուրեմն, հեղինակի իր կեանքը այդ ընտանեկան մթնոլորտում:

Այս ընտանիքներում երեխաները մեծանում են ծնողների ցաւին ու անցեալի թողած անբուժելի վէրքին անտեղեակ, ոչ-բնական մթնոլորտում: Բայց դէպքերի բերումով և կամ հոգեբանօրէն բացատրելի հանգամանքներով, **ծնողների մահից յետոյ կամ անմիջապէս դրանից առաջ փոխուում է ամէն ինչ: Նրանց առջև յանկարծ բացուում է ցաւի, արիւնի, տառապանքի ու հսկայ կորստի ցարդ անծանօթ, բարդ ու խճճուած մի աշխարհ, որ իրենց ծնողներին է եղել և հիմա իրենք են ժառանգել:** Եւ ծնում է մղումը, գրգիռը: Ծնողների այդ տառապալից կեանքի պատմութիւնը պիտի գրի առնուի. աշխարհը պիտի իմանայ: Որոշ պարագաներում, երբ դեռ կենդանի է ծնողը, հարցումներ, հարցազրոյց, արձանագրութիւններ, արդէն հայթայթում են ապագայ աշխատութեան հում նիւթը: Այլ դէպքերում, երբ արդէն ծնողը չկայ այլևս, կարծես անտարբերութեան իր մեղքը քաւելու համար, զաւակը սկսում է պրպտել, անցեալի պատմութիւնները իրար կապել ու իր ընտանիքի ու իր ժողովրդի վիպականացում, բայց այնքան ձշմարիտ անցեալը պատմել աշխարհին: Վէպը իբրև ձշմարտութիւն: Չէ՞ որ Միշել Ֆուքոն գրել է պատմագրութեան մասին, թէ «ես շատ լաւ գիտեմ, որ բացի վէպեր այլ ինչ չեմ գրել: Բայց դա չի նշանակում որ այնտեղ բացակայում է ձշմարտութիւնը: Ես կարծում եմ, որ վէպը հնարաւորութիւն ունի ձշմարտութեան դերը կատարելու»¹²:

Հետաքրքիր է Դէյվիդ Խերդեանի հաւատամքը, որ մղիչ ուժն է եղել Forgotten Bread, First Generation Armenian American Writers (2007), տասնեօթ անգլիագիր հայ գրողների գործերից բաղկացած իր խմբագրած հաւաքածոյի հրատարակութեան. «Մեր պատմութիւնները պարունակում են մեզ, բացայայտում են մեզ ու իրազեկ դարձնում: Մեր պատմութիւնները լեցնում են մեզ իսկական հպարտութեամբ՝ կարողացել ենք ապրել ու դիմանալ, ո՛չ միայն մեր լիակատար կեանքով, բայց նաև մեր պատմութիւնները պատմած: Որովհետև, առանց մեր պատմութիւնների, մենք ոչինչ ենք»¹³:

12 Միշել Ֆուքո, Power/Knowledge: Selected Interviews and Other Writings 1972–1977, Քալին Գորդընի խմբագրութեամբ (New York, NY: Pantheon Books, 1980), էջ 193.

13 Մէջբերումը կատարուած է Forgotten Bread, First Generation Armenian American Writers գրքի շնորհանդէտում հեղինակի ելոյթից, կազմակերպուած National Association of Armenian Study and Research-ի կողմից, Բելմոնթ, Մասաչուսեթսում:

Ընտանիքի պատմությունը, որ պատմությունն է Հայոց Ցեղասպանությունն, **պէտք է պատմուի աշխարհին**: Եւ դա չի կապում նրան, թէ այդ պատմությունը ընտանիքի գաղտնիքն է եղել, թէ՛ անկաշկանդ կիսուել է զաւակների հետ: Եւ Դէյվիդ Խերդեանը իր մօր՝ Վերոն Դիմեջեանի պատմությունը պատմեց՝ *The Road from Home, The Story of an Armenian Girl* (1979): Յակոբ Խաչիկեանը Հայոց Ցեղասպանութեան վիպականացուած պատմով, *A Summer Without Dawn* (2000), **պատմական յիշողութեան շարունակականությունը, դրա սերնդէ սերունդ փոխանցումը** ամրագրեց: Երբ որպէս վէպի վերջին արար, նոր իրար վերագտած ընտանիքը հայր, մայր և զաւակ, նկարչի մօտ յիշատակի պատկեր են նկարուում, հայրը զաւակին դառնալով ասում է. «Նրանք մեր ետին են կանգնած» ու ապշած զաւակին բացատրում. «Մեր նախահայրերը, իմ հայրը, նրա հայրը: Դու վերջին օղակն ես տասնեակ սերունդների, որոնք ստեղծել են մշակոյթ, որ քո ժառանգությունն է հիմա: Դու պիտի սովորես այն և հարստացնես այն, որպէսզի այն երբեք չմեռնի: Այդպիսով, քո նախնիները կապրեն յաւիտեան» (*A Summer without Dawn*, էջ 537–38):

Թէոդոր Խարբերդեանը իր հօր՝ Յակոբի անասելի պատմությունը յաւերժացնելով, կարծես ցանկանում էր իր ուսերին առնել այն յանցանքի զգացումը, որ ամբողջ կեանքում տանջել էր հօրը՝ թէ ինչո՞ւ ինքը կենդանի էր մնացել, երբ իր շուրջ զոհուել էին բոլորը: *Hagop, An Armenian Genocide Survivor's Journey to Freedom* (2003) աշխատութեան մէջ արտացոլում է Թէոդորի շրջուած խղճահարությունը՝ յանցանք է արդեօք, որ ինքը երջանիկ է ու հպարտ իր ծնողներով, իր ընտանիքով, իր ապրած երկրի դաւանած սկզբունքներով, որոնք երաշխաւորում են իր մարդկային իրաւունքները: Ու նա մահացած հօրն ուղղուելով, խնդրում է թոյլ տալ իրեն ազատուել յանցանքի զգացումից ու երջանիկ ապրել (*Hagop*, էջ 128):

Քէյ Մուրադեանի մայրը, մահուան անկողնում, մերժում էր հոգին աւանդել, մինչև դուստրը չխոստանար իրեն՝ թուրքի վառած դժոխքում բռնուածի իր պատմությունը պատմել աշխարհին: *A Gift in the Sunlight, An Armenian Story*-ն (2005), մարմնաւորում է Քէյ Մուրադեանի առաքելությունը՝ պատմելու ու այդ պատմությունը կրթութեան ձամբով փոխանցելու երիտասարդ, մանաւանդ՝ ոչ-հայ սերնդին:

Էլլէն Սարգիսեանը նոյն ձամբան է բռնել. *Deli Sarkis*-ը ցոյց պիտի տայ ոչ-հայ երիտասարդին, թէ թուրքերը ի՞նչ ոճիւր գործեցին, ոճիւր որ շարունակուում է վերապրողների կեանքում ու ներգործում նրանց սերունդների հոգիներում:

Ցեղասպանությունից ազատուածների ընտանիքներում տեսնում է մէկ այլ յատկանշական երևոյթ ևս. դա դրսևորում է երեխաների հանդէպ մի անսովոր գեր-հոգատարութեամբ, գեր-հոգածութեամբ: Կրած սոսկալի կորուստներից բխած մի տեսակ վախ է սա, յանկարծ սրանք էլ չկորեն: Այս ոչ-բնական վերաբերմունքը կաշկանդում է երեխաներին, նրանց դարձնում անվստահ: Իրենց արարքների համար նրանք կախեալ են դառնում ուրիշների հաստատումից, չեն կարողանում անկախօրէն որոշումներ տալ իրենց կեանքի, իրենց գործառնությունների և յարաբերությունների ոլորտում: “Diaspora” բանաստեղծութեան մէջ Դայանա Տէր-Յովհաննիսեանը հարց է տալիս.

**Ինչո՞ւ հայ երեխաններին
այնքան սքանչանքով են մեծացնում, կարծես
հիմա է որ
պիտի անհետանան:**

Մերի Թերզեանը յետոյ է գգում, թէ ինչո՞ւ էր հայրը այդպէս բարկանում ու արգիլում էր նրան Կահիրէի փողոցներում մենակ պտտել, յատկապէս՝ քաղաքում տիրող քաղաքական խառնակ օրերին: Յեղասպանութիւն տեսած մարդ էր. նրա համար բռնութիւնը, սպանութիւնը, բռնաբարութիւնը խառն օրերի սովորական երևոյթներն էին: Իսկ դա այնքան տարբեր էր ազատ երկրներում ապրած մարդկանց աշխարհընկալումից:

Ամբողջովին օտար ու անծանօթ մթնոլորտում գաղթական ընկած **հայ վերապրողները ձուլման վտանգի հոսանքն ի վեր պայքարեցին:** Իրենց գիտցած ձևով երեխաներ դաստիարակեցին՝ շեշտուած հայկականութիւն նրանց ներշնչելով/թելադրելով/, պարտադրելով՝ **«Դու հայ ես, և դա չմոռանաս»**, կամ՝ **«Իմ ընտանիքը գոհուեց անապատներում և դու պիտի փոխարինես նրանց կորուստը՝ հաւատարիմ մնալով քո արմատներին»:** Մերի Թերզեանը այս ամէնի իմաստին անդրադարձաւ միայն, երբ հայոց դպրոցն էր աւարտում: Ինչո՞ւ է հայկական դպրոց, նոյնիսկ մանկապարտէզ աւարտելը այդքան նշանակալից գաղթական համայնքի համար: Նրանց համար աւարտողները կոտորուած սերնդից ընծիւղած նոր ձիւղեր էին: Իւրաքանչիւր աւարտական վերյառնումն էր մոխիրներից ու յաղթանակը ընդդէմ ոճրագործների, ովքեր ցանկանում էին հայի գոյութիւնը ջնջել աշխարհի երեսից (Immigrants' Daughter, էջ 61):

Այնուամենայնիւ, յստակ է, որ օգտագործուած միջոցը՝ մշակութային, կրօնական և ազգային տարբերութիւնների շեշտաւորումը՝ ի շահ հայկականի, շատ դէպքերում դժուարացրել է գաւակների անխուսափելի մուտքը «օտար» շրջանակ՝ դպրոցում կամ աշխատանքի վայրում, և **պարտադրել է նրանց լուսանցքային դիրքում մնալ:** Մերի Թերզեանին այդ զգացումը պատեց, երբ հայկական դպրոց աւարտելուց յետոյ սկսեց Կահիրէի Կաթողիկէ Կոյսերի վարժարանը յաճախել: Նրա կարծիքով **օտար մշակոյթի մէջ ներծծուելը հաւասար էր փոխակերպման ընթացք բռնելուն, որ ինքնին նշանակում էր մասամբ ինքնասպանութիւն, մասամբ դաւաճանութիւն և մասամբ էլ վերածնութիւն:** Ինքնութեանդ ո՞ր մասը կը դիմանայ, ո՞ր մասը փոխակերպման կենթարկուի և ո՞ր մասից պիտի ամբողջովին հրաժարուես: Ուղեղդ չարչարող հարցեր (Immigrants' Daughter, էջ 182):

Ֆրանսահայ ժերար Շալեանը, վերապրողի գաւակ, մանկութիւնից ի վեր շատ էր լսել մեծ մօր սարսափելի պատմութիւնները: Եւ գուցէ հենց այդ պատմութիւնների անչափելի յորձանուտը պատճառ դարձաւ, ինչպէս Mémoire de ma Mémoire (2003) ինքնակենսագրականում է գրում, որ ինքը «հեռանայ իր ցեղի կապանքներից, խուսափի այդ պառաւ կանանցից, որ իրենց վիշտն էին պարպում, մոռանայ, որ ինքը ժառանգորդն է ցեղասպանութեան» (ժերար Շալեան, Memory of my Memory, էջ 10): Շալեանի օտարումը, նրա մուտքը համամարդկային արկածախնդրութիւնների աշխարհ, որ միևնոյն ժամանակ նշանակում էր վերելք ու յառաջդիմութիւն իր մասնա-

գիտական կեանքում, քառորդ դար տևեց: Նա անդրադարձավ, որ **հնարարոր չէ խուսափել**, որ **ինքը իրօք կրում է ցեղասպանության բեռը, ազդեցությունը** (Memory of my Memory, էջ 18):

Վիրջինիա Յարությունեանը նկարագրում է իր զարմանքը, երբ առաջին անգամ անդրադառնում է, թե իրենց տան մթնոլորտը, կենցաղն ու ամենօրեայ սովորությունները որքան տարբեր են իր բոլոր դասընկերներից: Նրա խիստ մայրը իրաւունք չէր տալիս աղջկան ընկերների հետ դուրս գնալ, տղաների հետ ժամադրություններ ունենալ: Նրա կարծիքով դա անպատշաճ ու նոյնիսկ անբարոյ էր, միայն փողոցի աղջիկները տղայի հետ մենակ ինքնաշարժի մէջ կը նստէին: Վիրջինիան օրեցօր աւելի էր մեկուսանում ու ընկճում (Orphan in the Sands, էջ 74):

Տան և դրսի երկուությունը մշտական լարուածութեան աղբիւր էր Հելէն Փիլիպոսեանի համար. իսկ այդ իրավիճակի արդիւնքում նա ըմբոստանում էր տանը, իսկ դրսում մեկուսացած էր ու անհաղորդ: «Տունը շատ հայ էր, դպրոցը շատ ամերիկացի» (My Literary Profile, էջ 37): Այս զգացումը աւելի էր շեշտում ուսուցչի ու դասընկերների, կամ նոյնիսկ աշխատակիցների հեգնական կամ բացասական ակնարկներով, մանաւանդ՝ եթէ հայերը իրար մէջ հայերէն էին խօսում: Երևոյթը նուաստացուցիչ էր, արդիւնքը՝ բարդոյթ, **հայի ստորակայութեան բարդոյթ**, որ նստում էր վերապրողներից ծնուած սերնդի հոգիներում: Փիլիպոսեանի համար տառապանք էր տնական բախումը երկուութեան, երկու աշխարհի, երկու բնեռ իրար բախտող, երբեք հաւասարակշռութեան չհասնող: Որքան շատ են այս հոգեվիճակը մարմնացնող կերպարները Յակոբ Կարապետեանի բազմազան գործերում, «Որևէ տեղից մինչև այստեղ», «Անծանօթ հոգիներ», «Մի մարդ և երկու շիրիմ», «Փայտէ նժոյգը» և դեռ ուրիշներ: Իսկ Փիլիպոսեանի բանաստեղծական ստեղծագործութիւնների մէջ դա արտացոլում է հպանցիկ արտայայտութիւններով և կտրատուած տողերով: Օրինակ՝ History's Twist (2008) բանաստեղծութիւնների ժողովածուի մէջ ամէն տեղ ցրուած, երբեմն առերևութապէս բուն նիւթին չյարող բառակապակցութիւններ, “the Turkish sword” (թուրքի սուրը) , “the hoary history” (հնացած պատմութիւնը), “the apricot spoke Armenian, /and there I found my seed” (ծիրանը հայերէն խօսեց, /և ես այնտեղ գտայ իմ սերմը), “My mouth is dry with the stories of the desert/of Der-el Zor so long ago” (Բերանս չոր է անապատի պատմութիւններով/Դեր-Զորում, այնքան երկար ժամանակ առաջ), “Remembrance is the epitaph/for the ghosts of humble glory” (Յիշատակութիւնը տապանագիրն է/համեստ փառքի ուրուականների համար):

Բոլոր պարագաներում, անկախ ծնողների վերաբերմունքից, պատմած կամ չպատմած պատմութիւնից, **յիշելու պարտաւորութիւնը, յիշողութեան բեռը փոխանցուել է զաւակներին**: Այդ յիշողութեան հետ դէմ հանդիման գալու համար շատերը իրենց ծնողների հայրենիք, ծնդավայրը փնտռելու ելան. մի տեսակ «**ուխտագնացութիւն» դէպի Արևմտահայաստան**: Դա նաև ի կատար ածումն էր իրենց ծնողների լուս իղձերի՝ վերադարձ պապենական, հարազատ օձախին: Մարգարէթ Աձեմեան Ահնէրթը, Հրանտ Մարգարեանը, Հրանտ Խաչատուրեանը, Արփինէ Գոնիալեան Գրոնիէն, Էլլէն Սարգիսեան Չեսթնաթը և այլք պիտի շօշափէին այն հողն ու ջուրը, սարն ու քարը, որ սուրբ նշխարք էր եղել իրենց մանկութեան օձախներում, որպէսզի

ծնունդին The Knock at the Door (2007), «Քարածայն պատարագ» (1998), The Way it Turned out, A Memoir (2012), “A Place in the Sun, in Turkey, Malgre Sangre,” (2009), Deli Sarkis: The Scars he Carried, A Daughter Confronts the Armenian Genocide and Tells Her Father’s Story (2014) և այլ հարուստ բովանդակությամբ, անկեղծ վկայություններ:

“How to Talk with the Dead” բանաստեղծության մէջ Դայանա Տէր-Յովհաննիսեանը խօսում է իր կրած յիշողութեան բեռի մասին, յիշողութիւն, որ ուխտեց պահել և այն փոխանցել յաջորդ սերնդին: Այդ բեռը նա զգացել էր, երբ տասներկու տարեկանում ցեղասպանութիւնը վերապրած հօր կողքին կանգնել էր մեծ մօր գերեզմանի առջև.

**Ուզում էի ասել նրան, թէ
եթէ ես երեխաներ ունենամ, նրանք կիմանան
թէ նա ինչպէս էր թնր կորցրել¹⁴. ուզում էի ասել
որ թէև իր ամբողջ ընտանիքը
կոտորուել էր թուրքերի ձեռքով,
բայց մենք մնացողներս
իրենն էինք
բայց ես չգիտէի
մեռածի հետ ինչպէս խօսել:**

**Երբ տուն վերդարձայ
առաջին բանաստեղծութիւնս գրեցի:**

Դայանայի համար բանաստեղծութիւնը դարձաւ Հայոց Ցեղասպանութեան զոհերի հետ անդրշիրիմեան կապ հաստատելու միջոց:

Փոխանցուած յուշերի բեռը երկրորդ սերնդի մօտ երբեմն այնքան ծանր է կշռել, որ տիրապետել է ներկային. ու նրանք անցեալը ապրել են ներկայի պէս: Ալիսիա Կիրակոսեանը վկայում է “An Inconvenient Genocide” (2009) բանաստեղծութեան մէջ.

**Ցաւը միշտ թարմ է
թաքնուած
բիլիոնաւոր մեր բջիջների
խորհրդաւոր թելարկումների մէջ
ու խաղի է բերում մեր մտքերը,
մեր արեան թրթռումի
հետ խառնում
նեխում, ազդում է կեանքի վրայ:**

14 Ընտանիքում պատմուել է Դայանայի մօր կողմից մեծ մայրիկի, քաջ Զարիֆի մասին, ով յղի էր, երբ իր յեղափոխական ամուսնուն թուրքերը իր աչքի առջև սպանեցին: Զարիֆը ամուսնու հրացանը պահեց, և երբ զաւակը պատանի դարձաւ, յանձնեց նրան, որ մօր շնչի տակ յեղափոխական էր դարձել: Ու երբ թուրքերը եկան տղային ձերբակալելու, չարչարեցին մօրը, թնր կոտրեցին, որ զաւակի տեղը ասի: Բայց նա չասաց: Չնայած գիտէր:

Վեհանուշ Թեքեանը զգում է սահմնեցուցիչ ներկայությունը Եղեռնի, որ երբեմն «յիշողութեանս տարածքին վրայ կ'իջնէ իբրև լախտ, այնտեղ բնակելու իրաւունք չունի, գիտէ՛ որ չունի»¹⁵։ Թեքեանը իր «Մոխիրէ ծառ» (1987) գեղարուեստական արձակի մէջ փորձում է ձերբազատուել Ցեղասպանութեան պարտադրիչ ներկայութիւնից, բայց գիտի, թէ «պիտի չանհետի բոլոր միջանցքներէս. Ամենակով, բոլոր դուռներուն առջև իր անուանատախտակը դրեր է» («Հրագիր» ժողովածու, 2000)։

Անցեալը ապրում է ներկայի նման, և երբեմն այնպիսի սաստկութեամբ, որ շրջապատի առթած ամենաչնչին զուգորդութիւն ենթակային փոխադրում է անցեալ, նոյնիսկ եթէ այդ անցեալը իրենը չէ և գտնուում է Ժամանակի և տարածութեան մեծ հեռաւորութեան վրայ։ “Ayash Prison” բանաստեղծութեան մէջ, Դայանա Տէր-Յովաննիսեանը իր ինքնաշարժով գիշերով անցնում է անծանօթ փողոցներով ու հասցէ է փնտռում։ Բայց յանկարծ փողոցների անունները տարբեր պատկեր են ստանում, Չաննինգը՝ Չանկերի, Այերը՝ Այաշ են երևում։ Ու Դայանան Սիամանթոյի, Ռուբէն Սևակի ու Գրիգոր Զօհրապի հետ է։

Յակոբ Կարապետցը որպէս թղթակից մասնակցում է Urban Renewal Federation of America (URFA)-ի տարեկան համագումարին Հարթֆըրդում։ Բայց URFA մակագրութիւնը սրահի մեծադիր պաստառների վրայ նրան մտովին Ուրֆա է փոխադրում՝ 1915-ի հերոսական ինքնապաշտպանութիւն։ Ու նա այլևս չի լսում բեմից արտասանուող ձառերն ու զեկոյցները։ Ահա բեմից Նշան Պեշկեպաշլեանն է խօսում իրեն, հերոսամարտն է դրուատում։ Մեր նախնիքների ստուերները հետևում են մեզ ու մեզ հետ են միշտ¹⁶։

Աղէտի սարսափների ժառանգած յուշերը ապրելով, երկրորդ սերունդը իր ձայնը միացրեց Հայոց Ցեղասպանութեան գրական ազդումներին, պահանջեց ու բողոքեց։ Բողոքեց իրեն բաժին ընկած ճակատագրի դէմ. **բողոքեց ոճիրը ուրացող ոճրագործի դէմ, որ իր ամբարիշտ կեցուածքով չբուժուած վէրքն է փորփրում**, կրակի վրայ իւղ աւելացնում։ Զայրոյթ և յուսահատութիւն արձագանքում են գրական գործերում։ “An Inconvenient Genocide” բանաստեղծութեան մէջ Ալիսիա Կիրակոսեանն է ձայնում.

**Ուրեմն, մենք
անպատեհ ցեղասպանութեան
վերապրողների զաւակներս
ձայնում ենք
աշխարհը շարժող հնչեղութեամբ՝**

**Այո, դա պատահեց
Եւ դա մենք չենք մոռացել։**

Վահէ Օշականը, Յակոբ Կարապետցը, Պողոս Քիւփէլեանը թուրքի ուրացութեան դէմ ելած հայ ազատամարտիկների արդարամատոյց գործողու-

15 **Վեհանուշ Թեքեան**, «Մոխիրէ ծառ», էջ 141-198, մէջբերումը էջ 171-172-ից։ Տե՛ս «Հրագիր» ժողովածու, 2000։

16 **Յակոբ Կարապետց**, «Մեր նախնիքների ստուերները» պատմութիւն, էջ 33-49, Անկատար (1987) ժողովածուի մէջ։

թիւներն են պանծացնում: **Թուրքի ժխտողական կեցուածքը գէնքի ուժով պէտք է տապալուի:** Դայանա Տէր-Յովհաննիսեանը և Ալիսիա Կիրակոսեանը թուրքին դաշնակից ուրացող դիւանագէտների ու պատմաբանների դէմ են ելնում: Հրանտ Մարգարեանը փորձում է ցոյց տալ թուրքի սուտը, աշխարհին ներկայացուող խեղաթիրուած պատմութիւնը՝ քաղաքների, շինութիւնների ու բնիկ ժողովուրդների ու մանաւանդ՝ մօտիկ անցեալի: Բայց թուրքը շարունակում է ուրանալ: Եւ սա նշանակում է «մեռնել ամէն անգամ, երբ ուրացումով անվաւեր ենք սեպւում»՝ An Inconvenient Genocide բանաստեղծութեան մէջ գրում է Կիրակոսեանը: **Ուրացումը արգիւում է ապաքինումը:**

Եւ այսպէս, դեռ պիտի շարունակուի: Պատմագէտները դեռ երկար պիտի տքնեն նորանոր փաստերով ապացուցելու ապացուցուածը: Արուեստագէտները իրենց տաղանդը ի գործ պիտի դնեն արուեստի մէջ ճակատ ճակատի գալու ցեղասպանութեան հետ, դարձեալ ու դարձեալ պարզելու, որ ինչ որ պատահեց 1915-ին ցեղասպանութիւն էր, ոչ պակաս, և այդ ճամբով մաքառելու ուրացման դէմ: **Երկրորդ սերնդի գրականութիւնը արտացոլքն է այդ հսկայ ճիգի, արձագանքը ցեղասպանութիւնից անցած հայ ժողովրդի հաւաքական հոգեվիճակի, որ բոլորինս է:** Ու խնդիր չէ, թէ քո նախնիները անցել են անապատից, թէ՞ թուրքի եայթաղանը նրանց չի էլ դիպել: Ինչպէս Դայանա Տէր-Յովհաննիսեանն է ասում՝ “We are children of Der zor” մենք զաւակներն ենք Դեր-Ջորի¹⁷:

Իսկ դա արդէօք զոհի հոգեբանութիւնն է ցոյց տալիս: Սխալ կլինի այդպէս մեկնաբանել: Սփիւռքահայը զոհի հոգեբանութիւն չունի. բայց դա չի նշանակում, որ Ցեղասպանութեան ազդեցութիւնը նստած չէ նրա հոգում, չի նշանակում, որ Ցեղասպանութիւնը կարևոր մի տարր չէ նրա անհատական և հաւաքական ինքնութեան կառոյցում: Քանադահայ անգլիագիր և ֆրանսագիր գրող, բանաստեղծ և գրական քննադատ և ինքն էլ Ցեղասպանութիւնը վերապրած ծնողների զաւակ՝ Լորն Շիրինեանի ձևակերպումով՝

1915-ը գործում է իբրև խորհրդանիշ, որ հային տալիս է ինքնագիտակցութիւն, ինքնիմացութիւն: Ցեղասպանութիւնը վերապրած լինելով, հայը ո՛չ միայն ինքն իր վրայ հաւատք պիտի ունենայ, այլ իր գոյութիւնը պիտի փաստի ուրիշներին: Սփիւռքահայ գրականութիւնը այս պահանջի արտայայտութիւնն է¹⁸:

Սփիւռքահայը ապրում է կենդանի յուշերը իր նախնիների դէմ կատարուած և անպատիժ մնացած ոճրի: Պարզապէս, տարբեր սերունդները տարբեր են դիտում անցեալը ու տարբեր ձևով են դիմակայում իրենց ինքնութեան և ինքնագիտակցութեան հարցերին: Լորն Շիրինեանը այսպէս է բացատրում: Վերապրող առաջին սերունդը ապրեց հայաբար, իր հայ շրջապատի մէջ: Հայրենիքից հեռու կեանքին համակերպուեց՝ խոր գիտակցելով, որ ինքը պահող ու պահպանողն է անցեալի յիշողութիւնների և դրանց փոխանցողը յաջորդ սերունդներին: **Բայց յաջորդ սերունդը արդէն կրողն**

17 Մէջբերումը “Tryptic” բանաստեղծութիւնից, էջ 14, տես **Տէր-Յովհաննիսեանի** About Time (1987) բանաստեղծութիւնների ժողովածուի մէջ:

18 Տես **Լորն Շիրինեան**, Armenian North American Literature, A Critical Introduction: Genocide, Diaspora, and Symbols (Lewiston, Canada: Edwin Mellen Press, 1990): Մէջբերումը էջ 60-ից:

Է երկու մշակոյթի, երկու ժառանգութեան: Որին յարել. որ՞ը պահպանել¹⁹: Անձնական կեանքում Լորնը իրեն գտել էր մի անգոյ աշխարհում, որ ո՛չ պատկանելիութիւն ունէր և ո՛չ էլ հաւասարակշռութիւն: Դա մղձաւանջ էր, և դա ապրել են երկրորդ սերնդի շատ ներկայացուցիչներ, մինչև իւրաքանչիւրը գտել է իր լուծումը, իր ճամբան: Նոնա Բալաքեանի վկայութեամբ, Ուիլիամ Սարոյեանի համար՝ լուծումը նրա գրականութեան բաղկացուցիչ տարրերի մէջ է, «անգլերէն լեզուն, ամերիկեան հողը և հայ հոգին»²⁰:

Այդ երկուութեան մէջ տուայտող Դայանա Տէր-Յովհաննիսեանը ահա թէ ինչ է պատասխանում, երբ հարց են տալիս թէ ինքն իրեն հայ է զգում թէ՞ ամերիկացի: “Two Voices” բանաստեղծութեան մէջ գրում է,

**Ոչ, յաճախ, ինչպէս դու
ես մոռանում եմ պիտակները:**

Բացի եթէ կտրես ինձ,

**Յետոյ ես արեանս կը նայեմ.
Նա հայերէն է խօսում:**

Յաւերժ փնտռող իր ինքնութեան, սփիւռքահայ ինքնութեան, բարդ կառուցուածքը հանգուցազերծող Յակոբ Կարապենցը «Գրողը և իր ճամբան» գրութեան մէջ իր հոգու ծալքերն է բացում.

Ես Սփիւռքի ծնունդ եմ, աւելի սփիւռքահայ քան պարսկահայ կամ ամերիկահայ: Սփիւռքից զատ այլ աշխարհ չգիտեմ և, իր բոլոր հակասութիւններով հանդերձ, ինձ հարազատ եմ զգում Սփիւռքի ճամբաներում.... Այս լավ է, թէ վատ, չգիտեմ: Միայն այն գիտեմ, որ մենք կամուրջ ենք հանդիսանում Անապատի Սերունդի և Նորագոյն Սփիւռքի միջև, մի ահագին առաքելութիւն, որ իրականութիւնն է դրել մեր ուսերին²¹:

Բայց հենց այդ նոյն պարբերութեան մէջ խոստովանում է, որ լիովին իւրացնելով հանդերձ Ամերիկան, ուր իր կեանքի մեծ մասն է անցկացրել, ու ընտելանալով հանդերձ ժողովրդին, որպէս E Pluribus Unum, երբեմն ինքն իրեն զգացել է «ինչպէս երկկենցաղ մի էակ, մերթ գալարուելով երկուութեան անվերջ փակուղիներում...»²²:

Վերջին երկու տասնամեակներում սփիւռքահայ մտայնութեան, գործող հասկացութիւնների և սեւեռումների համացանցի վրայ իբրև երկու նոր **անկիւնադարձային ազդակներ**, ներգործման աստիճանական աճով, եկան աւելանալու **նորանկախ Հայաստանն ու քիչ թէ շատ փոխուած ու արմատախիլ հայի համար աւելի հասանելի դարձած Թուրքիան**²³: Իրօք, կա-

19 Տե՛ս Լորն Շիրինեան, Writing Memory, The Search for Home in Armenian Diasporan Literature as Cultural Practice, (Klingston, Ontario, Canada: Blue Heron Press, 2000), էջ 1:

20 Լորն Շիրինեանը մէջբերում է 1958-ին արտայայտուած Նոնա Բալաքեանի այս միտքը: Տե՛ս նոյն տեղում, էջ 30-32:

21 Յակոբ Կարապենց, «Երկու Աշխարհ, Գրական Փորձագրութիւններ» (Watertown, Massachusetts: Blue Crane Books, 1992), «Գրողը և իր ճամբան» գրութիւնից, էջ 76:

22 Նոյն տեղում:

23 Այստեղ, գիտակցաբար, Թուրքիա և ո՛չ Արևմտահայաստան անուանումը գործածեցի, քանի որ Ցեղասպանութիւնը վերապրած ծնողի, և հիմա իր, արմատների ու «հայրենիք»ի հետ ֆիզիքական շփում փնտռող «ուխտաւոր» գաւալի համար շատ անգամ փնտռած վայրը դուրս է Արևմտեան

րող է տարօրինակ հնչել, բայց երկրորդ սերնդի ճամբորդությունը Թուրքիա, աելի զգացական որակումով «ուխտագնացություն» ենք սեպում: Այդ ճամբորդությունը, Ցեղասպանությունը վերապրած ծնողի արմատների, հայրենիքի, ապրած մանկության և տուած կորուստների հետ հաղորդակցուելը, «ուխտաուոր»ի առջև նոր տեսադաշտ է բաց անում, **պատկանելիութեան մի նոր զգացում առաջացում:** Եւ նա վերադառնում է երբեմն իր պարտքը կատարածի բաւարարութեամբ, երբեմն տեսած ու զգացած անգիտութեան կամ ուրացման պատճառած ցասումը սրտում ու տիրոջ պահանջատիրութեամբ, երբեմն էլ հաւաքած նիւթով ու գիտելիքներով հարստացած՝ ծնողի կեանքի պատմությունը գրելու աելի մեծ վճռականութեամբ:

Արփինէ Գոնիալեան, Գոռնիէն իր հօր ծննդավայր Գոնիայում, իր կորցրածն է փնտռում: Պատրաստ է սիրել տարբերութիւններն ու նմանութիւնները, նոյնիսկ ջնջել ազգութիւն բաժանումը՝ խոկումի և ներդաշնակութեան սիրոյն: Նա իրեն լաւ է զգում Գոնիայում, վերագտնում է լեզուն, որ «որպէս մի գանձ կորցրել էր ժամանակաւորապէս»: Գտնում է մշակոյթը, որ միշտ իր մէջ էր: Եւ վերադառնում է «բարենորոգուած», տարօրինակ փոխակերպումով, «անգիտակցաբար թուրքանման հայ լինելուց՝ դարձայ հայանման ամերիկացի»²⁴: Արփինէ Գոնիալեանը հասած է թուում լինել հաւասարակշռութեան, փարատուած է թուում նրա ինքնութեան և պատկանելիութեան տանջող շփոթը:

«Ուխտագնացությունը» դէպի նախնիների հայրենիք միանգամայն այլ ազդեցութիւն թողեց Հրանտ Մարգարեանի վրայ: Նա իր հօր ծննդավայր, Վանին կից գտնուող Շուշանց գիւղն էր փնտռում, գիւղի աղբիւրն ու եկեղեցին, որ մնացել էր հօր յիշողութիւններում, որ իրն էր հիմա: Նա հօր անխօս փափագն էր կատարում. «Երթամ Երկիր ու իր հոգիին հետ աղօթեմ չթաղուած մեր զոհերուն համար: Երթամ Երկիր ու մեր պատմութեան քարացած, բայց չմարած երագներու հետքերով իր և իմ ուխտը կատարեմ»²⁵: Մարգարեանը դէպի իր պապենական «ՀՈՂ»ն էր գնում, բայց միևնոյն ժամանակ կասկածը կրծում էր սիրտը: «ՀՈՂԴ» հեգնական հարցման նշանը փոխարինում է շեշտին (էջ 16):

Վանայ ծովի ափին կանգնած այսպէս է թախանձում,

**Կը մրմնջեմ յափշտակ,
Ծով, պարուրէ ինձ մէջդ,
մանկութիւնս եմ քեզ քերեր...**

**Ամէն քարի հետ սակայն
ես իմ հայրը կը յիշեմ,
որ ափերուն այս ծովուն,
մանկութեան խինդ է ապրեր...**

Հայաստանի սահմաններից:

24 Արփինէ Գոնիալեան, Գոռնիէ, “A Place in the Sun, Malgre Sangre,” Ottoliths, A magazine of Many E-Things.

25 Հրանդ Մարգարեան, «Քարաձայն պատարագ / Liturgy-sound of stones (Համագգային Հայ Կրթական և Մշակութային Միութիւն, Նիւ Եորքի Մասնաճիւղ, 1998), էջ 12: Հրատարակությունը երկվեզուան է:

.....

Կը մըմնջեմ ես յուշիկ,
ծո՛ղ, պարուրէ ինձ մէջդ,
Քեզի շնտ եմ երազեր,
Քեզ որբութիւնս եմ բերեր (էջ 94):

Բայց Շուշանցում հիմա քրդեր են ապրում: Եկեղեցին աւերակ է, հօր տունը չի գտնում, աղբիւրը, Ապարանջան Աղբիւրը չկայ: Ուխտը կիսատ է մնացել: Գիւղացիները ապշած նայում են իրեն, երբ ասում է, թէ հայրը այստեղ է ծնուել: Բայց բարիացական են, հրաւիրում են իրեն պարտէզ ու հիւրասիրում. «Դիմացս մոռացութեան տրուած գիւղ մը կայ որ իր նոր բնակիչներով ինձի որպէս հիւր կընկալէ... **Ես՝ հիւր իմ պապենական հողին վրայ...**» (էջ 124):

Մարգարեանի այցելութիւնը Թուրքիա ու քաղաքներ մէկ առ մէկ, Այնթաք, Խարբերդ, Մուշ, Կարս, Անի, նոր բնակիչներով, յառաջադէմ, այժմէական, ուր միանգամայն ջնջուած է յիշողութիւնը հայու գոյութեան, նրան մղում է հակադրուելու, գոնէ իր գրչով բացայայտելու իւրաքանչիւրի պատմական անցեալը, տեղն ու դերը հայ ժողովրդի ու Հայաստանի պատմութեան մէջ: Այդպիսով **ճակատելու թուրք պաշտօնական ուրացման և թուրք սերունդների անգիտութեան դէմ:** Մարգարեանը յոյս ունէր, որ վերադարձին կարող է բացատրել ու ճանաչել «ԲԱՑԱՏԸ», որովհետև, ինչպէս ինքն է գրում, «Ամէն գիտակից հայ սև փոսի նման ԲԱՑԱՏ մը ունի իր ենթագիտակցութեան մէջ, և որուն ինչ ըլլալը չի գիտեր: Անուն չունի այդ ԲԱՑԱՏԸ: Շուրջը կը դառնանք ազգովին ու կը փորձենք ածականներով բնորոշել՝ կարծօտ, պահանջ, բարկութիւն, վրէժ, դառնութիւն, անկարողութիւն, անարդարութիւն, պահանջատիրութիւն...»: (16–18): Կարողացա՞մ արդեօք: «Քարածայն պատարագ»ը ապացոյցն է այն բանին, որ այդ զգացումները աւելի սրուեցին: ԲԱՑԱՏԸ աւելի խորացաւ:

Իսկ միւս ազդակը՝ իր դէռ մանկութիւնն ու կազմաւորման տարիներն ապրող, խորհրդային օտարաշունչ կապանքներից ազատուած Հայաստանի անկախ Հանրապետութիւնը: Միթէ չէ՞ր կարող առնուազն կարօտի զգացումը փարատել, դառնալ հայրենիքը համայն հայութեան–ինչպէս էր Առաջին հանրապետութեան օրերին–տէր կանգնել հայոց պահանջատիրութեան, աշխարհացրիւ իր որդիներին տուն կանչել ու նրանց որբութեան ցաւը սփռփել, Սփիւռքի տագնապը թեթևացնել: Տագնապը՝ հոգեվարքն էր երկարաձգուած, որ տիրում էր մանաւանդ՝ Արևմտեան Սփիւռքում՝ քողարկուած հանգստաբեր անտարբերութեամբ և ուժացումով: Ահագանգը հնչեցրել էին Մինաս Թէօլէօլեանը,²⁶ Վահէ Օշականը, Յակոբ Կարապենցը, Նու-

Է (ԺԳ) փաթիլ, թիվ 2 (50) ամպիլ–հունիս, 2015

ՎԷՎ համահայկական հանդես

26 «Հայրենիք» ամսագիրը, որ սերում էր «Հայրենիք» օրաթերթից և հրատարակւում էր Բոստոնում դէռ 1922-թուականից, 1970-ին, երեք համար որպէս եռամսեայ հրատարակուելուց յետոյ, դադարում էր՝ ընթերցողների պակասի և սփիւռքահայութեան անտարբերութեան պատճառով: Եւ պարբերաթերթի խմբագիր Մինաս Թէօլէօլեանը մեկնաբանում էր տխուր իրադարձութիւնը «Տագնապը որ Սփիւռքինն է» խորագրով վերջին թուի իր յօդուծում: Տե՛ս հատոր III, թիւ 9, 1970, էջ 3: Իսկ «Հայրենիք» ամսագիրը, որ ցրում էր ամբողջ Սփիւռքում և իր տեղն էր բացել բոլոր գաղթածախներում, պարզ մէկ պարբերաթերթ չէր: Նրա շուրջ հաւաքուած էին ժամանակի ամենից երևելի մտաւորականութիւնը՝ առաջնորդելու, ուղղութիւն տալու, յոյս ներշնչելու Ցեղասպանութիւնից և Հայաստանի խորհրդայնացումից յետոյ գաղթական ընկած հայ բեկորներին, նրանց մէջ վառ պահելու հայրենիքի գաղափարը:

բար Ակիշեանը, Վրէժ-Արմէնը և ուրիշներ դեռ 1970-ական, 1980-ական թուականներից:

Հայաստանի անկախացումով նոր փուլի մէջ մտան Սփիւռք-Հայաստան յարաբերութիւնները: Իրականութեան մէջ, նոր փուլի սկիզբը դրուել էր դեռ Խորհրդային կարգերի փլուզումից առաջ, Գորբաչովեան մեղմ քաղաքականութեան պայմաններում: Հ.Յ.Դաշնակցութիւնը իր 24-րդ Ընդհանուր Ժողովում (1988), «**Դէպի Երկիր**» կարգախօսով, որոշեց իր կառոյցներով վերադառնալ Հայաստան: 1988-ի Դեկտեմբերին Հայաստանում տեղի ունեցած և անդարմանելի կորուստներ խլած երկրաշարժի առթած հսկայ կարիքը աւելի արագացրեց գործընթացը: Օգնութեան խմբեր առաքուեցին, բայց միևնոյն ժամանակ Հայաստան և Արցախ գործուղուեցին մի շարք երիտասարդներ, որոնք մեծ ոգևորութեամբ ու նուիրումով գնում էին իրենց գիտելիքը, ուժն ու եռանդը ներդնելու հայրենիքի վերագարթման գործին: Մարդկային յարաբերութիւնները միշտ չէ, որ շինիչ ու դրական էին: Վերջապէս եօթնասուն տարիների հեռաւորութիւնից յետոյ դէմ դիմաց էին գալիս տարբեր դաստիարակութիւն ստացած, տարբեր մշակոյթների ու գաղափարական դաշտի ազդեցութիւնը կրած հայ մարդիկ: **Սփիւռքն ու Հայրենիքը իրարու չէին ճանաչում:**

Միջին Արևելքում ծնուած և 1970-ականներից ԱՄՆ-ում կայք հաստատած Խոսրով Ասոյեանը, բանաստեղծ ու դաշնակցական գործիչ, առաջիններից էր, որ ամբողջ հոգով իրացրեց «Դէպի Երկիր» կարգախօսը ու շուրջ երկու տարի, այդ թէժ տարիներին, գործեց Հայաստանում և Արցախում: 1992-ին լոյս ընծայած «Վեր-ա-դարձ» բանաստեղծութիւնների ժողովածուն իր երազած բայց անկատար մնացած ու կոտորակուած վերադարձն է, հետաքրքիր ձևով նախ դէպի Լիբանան: ԱՄՆ-ն աքսոր է նրա համար, մթնոլորտը խեղդիչ է ու կաշկանդում է թոյիչքը. իսկ Լիբանանը՝ հայկական այն տաք քուրան, ուր նրա անձն էր կազմաւորուել:

**Վերադառնամ արևուն
անապատէն հոգիի
խաչներուկէն այս անել,
արևմուտքէն յղփացած
վերադառնամ երգերուս...**

Վերադարձ դէպի իր սիրելի Լիբանանը, ուր՝

**.... կը ծորի,
ազաններու և կոչնակի
խորհուրդովը օծուն
հոգիին մէջ
հող ու արև որոնող
այդ պատանի եկուորին...²⁷**

Իսկ որտեղից պիտի գայ վերադարձի յոյսը, բայց և ուժն ու կարողութիւնը:

²⁷ «Երկու անկին» ընդհանուր վերնագիրը կրող շարքից, էջ 11:

Ասոյեանը այդ ուժը հայցում է Մծբինից, այդ երբեմնի փառքի մայրաքաղաքը, որի աւերակների վրայ Ցեղասպանութիւնը վերապրած հօր ծննդավայր Մարդինն էր կառուցուել և որի կարօտն ու ձգողական ուժը զաւակը պահում էր իր հոգում որպէս յիշատակ իր արմատների:

«Դէպի Երկիր» կանչը համակեց Ասոյեանին, վերադարձի նոր ճամբայ բացեց, արքորից ճողոպրելու նոր հանգրուան: Ու գնաց յոյսով.

**Վերադառնամ,
Մայր,
ու քեզ խնկարկեմ
Հայկի ընդվզումով նորոգուած՝
Արտաւազդի շղթաները
Փշրելով...²⁸**

Հաւաքածոյի երրորդ բաժինը, «Դէպի Երկիր» ընդհանուր վերնագրով, սկսում է Հայաստանի դրուատանքով, յետոյ մղձաւանջ՝ երկրաշարժի պատճառած աներևակայելի աւերին դէմ հանդիման: Բայց ինքը հայրենիքի գրկում է, «Սփիւռք՝/հողի անէծք...»ը թողած, ու միշտ յուսալով, որ իր երթը անվերադարձ է լինելու: Այնուամենայնիւ, հակասութիւնները շատ են, բախումը անխուսափելի: Ցաւով է նկատում, որ Սփիւռքը՝

**Տէր-Ջորի
արհաւիրքով մկրտուած՝
բազմապատկուած ճշմարտութիւն.
Մնացորդացի
անառարկելի ժառանգորդ
ու տէր
եօթանասունամեայ կամուրջ...
Մերժում է ու դառնում՝
երկիր-արտերկիր
բառալխադին մէջ
ընդգծեալ բազմակէտ...(էջ 61-62)**

Ցեղասպանութեան ազդեցութիւնը հայ հաւաքական հոգեբանութեան վրայ անկասկած աւելի խորն է եղել Սփիւռքում, քան հայրենիքում: Եւ դա ի հարկէ հայ ժողովրդի երկու հատուածի վրայ ներգործող կրթա-դաստիարակչական քաղաքականութեան և մտքի ու գաղափարի արտայայտութեան կարելիութեան առկայութեան կամ բացակայութեան բերումով: Եթէ Սփիւռքում սերունդները դաստիարակուել են ազգային պատմութեան, ձեռքբերումների, ձախողութիւնների, Եղեռնի թողած հետևանքների ու հայոց դիմադրական ուժի ընդհանուր համատեքստից բխած կրթա-դաստիարակչական քաղաքականութեան թելադրանքով, ապա՝ Խորհրդային կարգերը այդ ազատութիւնը խլել են հայ մարդուց: Պատմական յիշողութիւնը փոխանցուել է պատահական, որպէս արգիլուած պտուղ, կամ գաղտնօրէն,

է (ԺԳ) ցարի, թիվ 2 (50) ասպիլ-հունիս, 2015

Վէմ համահայկական հանդես

28 «Երկիր» ընդհանուր վերնագիրը կրող շարքից, էջ 34:

ցեղասպանությունը վերապրած ծնողների, տատիկների ու պապիկների վախուժորած շշուկներով²⁹:

Ձեյմզ Ուէրչը նման գործընթաց է արձանագրում Խորհրդային Միության պատմության մէջ: Այդ եօթանասուն-և-մի քանի տարիների **կրթա-դաստիարակչական քաղաքականությունը հիմնուած էր ընտրելական մօտեցման (selective approach) վրայ**: Ընտրուում էին և շեշտադրութեամբ աշակերտին մատուցուում ու այդ խողովակով նաև պատմութեան անցնում որոշ իրադարձութիւններ և դուրս էին թողնում ուրիշները: Այսպիսով ապահովուում էր սերմանումը **միատեսակ հաւաքական յիշողութեան, այդու նաև՝ միատեսակ խորհրդային ինքնութեան**: Ուէրչը այդ գործընթացը կոչում է տեքստի միջոցով միջնորդուած (textually mediated): Ու ցաւ յայտնում, որ «փոխակերպութիւնը իրապէս խեղաթիւրիչ էր, որովհետև այն սկսեց հաւաքական յիշողութեան վրայ գործադրուող խիստ հսկողութեամբ և մտաւ մի շրջան, որ կարելի է առաւելաբար քառս անուանել»³⁰:

Երկիր-արտերկիր կամ Հայրենիք-Սփիւռք երկուութիւնը իր աւերն է գործել Սփիւռքահայի հոգում: Մեծ ոգևորութեամբ Հայաստան մեկնած ու նոյնիսկ Արցախի համալսարանում ձրիաբար իր դասախօսական ծառայութիւնը ի սպաս դրած Վահէ Օշականը 1995-ին այսպէս էր արտայայտուում. «Հայաստանի կառավարութիւնը շարունակում է Սփիւռքը դիտել իբրև պատմութեան զարտուղութիւն (historical aberration), որի միակ գոյութեան իրաւունքը (raison d'être) հայրենիքին տնտեսապէս սատարելն է»³¹: Օշականը իր այս քննադատական յօդուածը դրական եզրակացութեան է յանգեցնում: Նա յոյս է յայտնում, որ գրողների նոր սերունդը վերջապէս կազդի տիրող իրականութեան վրայ, վեր կը յառնի քաղաքական ճեղքուածքի բերումով ստեղծուած կացութիւնից և հին «տէրերի» պարսաւներից՝ շինիչ երկխօսութիւն սկսելու նախաձեռնութեամբ: Հետաքրքիր է Օշականի մօտեցումը: Երկխօսութեան և վերջապէս թնջուկի լուծման հարցում նա երիտասարդ գրողներին, այս պարագային կարելի է ասել մտաւորականներին, և ոչ թէ իշխանաւոր դասին է ապաւինում:

Հետաքրքիր է նաև, որ այսօր՝ քսան տարի անց, Օշականի նշմարները իրենց խորիւրդը չեն կորցրել: Պատմական զարտուղի կամ Հայաստանի յաւելուած **Սփիւռքը մնայուն է, մանաւանդ՝ ներկայ պայմաններում. իսկ սփիւռքահայը՝ յաւերժ աքսորեալ**: «Մենք արքանդից դուրս յղացած հայրենիքի զաւակներն ենք, տարբեր քաղաքացիութիւններով: Արմատախիլ ենք եղել մէկ անգամ ու օտարական ենք միշտ ու ամէն տեղ», գրում է Մերի Թերզեանը (The Immigrants Daughter, էջ xv): Եւ սա տիրող տրամադրութիւն է Սփիւռքի գրականութեան մէջ, վկայ՝ Կարապենցի, Օշականի ու Ալիշեանի ստեղծած այնքան կեանքին մօտիկ կերպարները: Վկայ՝ Բեյրութի քաղաքացիական պատերազմի բերումով երկրից հեռացած և Քանադա հաստատուած Յարութիւն Պէրպէրեանի խոստովանանքը՝ երբ իր կեանքի պատ-

29 Տէն Ռուբինա Փիլումեան, "The Memory of Genocide in Soviet Armenian Literature," էջ 233-248, «Բանբեր Մատենադարանի» 21, 2015. Այս յատուկ համարում ընդգրկուած են Հայագիտական ուսումնասիրութիւնների միջազգային ընկերակցութեան (AIEA) Երևանում կայացած 13-րդ համաժողովի (2014, հոկտեմբերի 9-11) նիւթերը: Համաժողովը վայելում էր Մատենադարանի համագործակցութիւնը:

30 **Ձեյմզ Վ. Ուէրչ**, Voices of Collective Remembering (Cambridge, UK: Cambridge University Press, 2002), էջ 5 և 173:

31 **Վահէ Օշական**, "Armenia and Diaspora, A Poetic Diatribe," RAFT, vol. 9, 1995, էջ 3-7, մէջբերումը էջ 6-ից:

մութեան ճշմարտութիւնն է արտայայտում.

**Բայց երբ կտրեցի ովկիանոսը խոր,
լայնատարած, համայնակուլ
երկրին մէջ նոր,
ես ինքզինքս
Միերին պէս բանտուած գտայ³²:**

Ընդհանրապէս գոյութիւն ունի այն համոզումը, որ մի ժողովրդի մշակոյթը, այս պարագային՝ գրականութիւնը կարող է բարգաւաճել միայն արմատները հայրենի հողում խոր տարածած: Եւ **լեզուն՝** այդ գրականութեան արտայայտչական միջոցն ու հոգին՝ եթէ զրկուած սնանող հողից, **կը զոհագործուի աքսորում:** Ցեղասպանութիւնը հենց այդ աւերը գործեց: Ցեղասպանութիւնը կործանեց դաբիրը, ապաւէնը հայոց լեզուի և գրականութեան: Ի հարկէ նպատակս արևմտահայ լեզուն և գրականութիւնն է, որը Սփիւռքի մեծամասնութեան համար միջոց է (էր) գրաւոր և բանաւոր յարաբերութեան և որով ինքն իրեն ձանաչում է Սփիւռքի մեծամասնութիւնը:

Սթիվըն Զէյքովսը, հրէական Ողջակիզումը վերապրած երկրորդ սերունդ, լեզուն համարում է մի ժողովրդի կամ հաւաքականութեան հաւաքական ինքնութեան հաստատման և փոխանցման կարևորագոյն միջոցը, որ «կը հայթայթի, կամրակայի հիմքը դեռ բազմաթիւ սերունդների յարատւման»³³:

Ես հաւատում եմ լեզուի կարևորութեան այս շեշտաւորմանը: Հաւատում եմ, որ իրենց հայրենի հողից կտրուած ազգային համայնքները կարող են աստիճանաբար տարտղնուել ու օտար երկրի մեծամասնութեան մէջ ներծծուել ու անհետանալ, եթէ լեզուն կորի: **Եւ դա Ցեղասպանութեան հետևանքներից է Սփիւռքի վրայ պարտադրուած:** Հաւատում եմ, որ եթէ կանգ առնի արևմտահայ գրականութեան շարունակականութիւնը, հայու գրչի արգասիք Արևմուտքի ու Արևելքի լեզուներով արտադրուած գրականութիւնը կը կորցնի այն սիւնը, որին պիտի յենուի իմաստ ունենալու համար: Այլ խօսքով, փոքրամասնութիւն համայնքը օտար երկրում պիտի ապրի իր պատմութեամբ, իր անցեալով, աւանդութիւններով ու արժէքներով, մշակոյթով ու իր լեզուով, որպէսզի՝ այդ երկրի լեզուով նրա զաւակների ստեղծած գրականութիւնը իր իմաստն ու ձանաչողութիւնը վաստակի և նոյնիսկ գոյութեան իրաւունքը ստանայ:

2010 թուականին UNESCO-ն Արևմտահայերէնը ներառեց վտանգուած լեզուների ցանկում: Ըստ այդ կազմակերպութեան որդեգրած սկզբունքների, ուրեմն, 2100-ին այլևս այդ լեզուով ոչ ոք չի խօսի: **Եւ դա Ցեղասպանութեան հետևանքներից է Սփիւռքի վրայ պարտադրուած:** Դա Իգրայէլ Չարնիի առաջադրած յղացքի՝ Linguicide-ի, լեզուասպանութեան արտայայտութիւնն է, որ իր աստիճանական լրումին է հասնում երկու դար յետոյ³⁴: Ո՞րն է

32 Յարութիւն Պէրպէրեան, «Սահմաններ» բանաստեղծութիւնների ժողովածուից (Երևան, 2007)

33 Սթիվըն Լէօնարդ Զէյքովս, "Language death and revival after cultural destruction: reflections on a little discussed aspect of genocide," Journal of Genocide Research (2005), 7(3), (էջ 423-430), Մէջբերումը էջ 423-424-ից:

34 Իգրայէլ Չարնիին այս բառակազմութիւնը առաջարկել է ցեղասպանութիւնների աստիճանները ակնի խորը պղելելու և մեկնաբանելու համար: Տե՛ս GPN, GENOCIDE PREVENTION NOW, Նոյեմբեր 2012, N 12.

միջոցը Հայոց Ցեղասպանության առթած այս իրողության առաջին առնելու: Ո՞վ (հաւաքական իմաստով) պիտի դիմակայի այս կորուստին:

Այս հանգրուանին որքան կարևոր է հայրենիքի և Սփիւռքի մնացած կառոյցների համագործակցութիւնը: Այս հանգրուանին, որքան կարևոր է **Ցեղասպանության հետևանքները վերացնելու համար տարուող կամ աւելի ճիշտ տարուելիք պայքարի ծրագրաւորումն ու համադրումը:**

Հայոց Ցեղասպանության հարիւրամեայ տարելիցի ոգեկոչման ձեռնարկների թէժ մթնոլորտում, շրջանառութեան մէջ մտաւ «**Ցիշում եմ և պահանջում**» խօսքը, կարգախօսը: Ոգևորութեամբ արտասանեցինք բոլորս, նրանով հանդերձ, որ այդ պարզ բառակապակցութիւնը բոլորովին տարբեր իմաստ էր ենթադրում տարբեր մարդկանց, բայց և աւելի կարևորը՝ տարբեր քաղաքական շերտերի համար: Մեր ազգային գոյատևման ու ապահովութեան այս ճակատագրական պայքարում որքան նպատակասլաց կլինի, եթէ այդ խօսքը դուրս գայ գեղեցիկ կարգախօսի իր կաղապարից ու գործ դառնայ, եթէ իւրաքանչիւրս այդ խօսքը ականջի օղ դարձնենք-ինչպէս մեր հները կասէին-ու դրա թելադրանքով առաջնորդուենք նոյնիսկ մեր առօրեայում:

Այս յօդուածում փորձեցինք ի բաց անել Հայոց Ցեղասպանության հետևանքները, որ կրում է սփիւռքահայութիւնը, բայց միայն սահմանափակուելով ու խօսելով այն հետևանքների մասին, որ գեղարուեստական գրականութեան մէջ է արտացոլուել, խօսեցինք հայոց լեզուի՝ արևմտահայերէնի յաւերժական գոյատևմանը սպառնացող վտանգի մասին:

Հայոց Ցեղասպանության հետևանքները բազմակի տարողութիւն ունեն, որ պիտի յստակօրէն բացայայտուի: **Իսկ այդ հետևանքները միայն Ցեղասպանության ճանաչումով չեն վերանայ:** Դա բաւական չէ մեզ հնարաւորութիւն տալու, որպէսզի կարողանանք «վերապրող ժողովուրդ» պիտակը նետել ու լիակատար ազգ դառնալ՝ հաւաքական մեր անցեալով, մեր ներկայով և մանաւանդ՝ մեր ապագայով: Ես հաւատում եմ որ, թէկուզ այսօր անտեսուած, հայ մտաւորականութիւնը իբրև կրողը հայ ազգային տեսլականի, Սփիւռքում թէ հայրենիքում, պարտականութիւն պիտի ստանձնի ցոյց տալու այդ ճամբան:

Ռուբինա Բ. Փիրումեան – Հայագիտական նիւթերի նախկին դասախօս UCLA-ում և այժմ գիտաշխատող: Հեղինակել է աշխատութիւններ, դասագրքեր և բազմաթիւ յօդուածներ՝ նուիրուած Հայոց ցեղասպանութեան գրականութեան, Հայ Դատին և կանանց հարցերին: Նոյն նիւթերով մասնակցել է բազմաթիւ միջազգային գիտաժողովների և կարդացել է հանրային դասախօսութիւններ:

ГЕНОЦИД АРМЯН ПРОДОЛЖАЕТ Терзать души выживших поколений

Рубина Б. Пирумян (Лос-Анджелес)

Ключевые слова – геноцид, литература армянской диаспоры, национальная идентичность, двойственность, последствия геноцида, передача, генетическая модель передачи, отношения родители–дети, мемуары, историческая память, ассимиляция, комплекс неполноценности, бремя памяти, не принятие преступления, психология жертвы, паломничество, умерщвление языка.

Независимо от того, как дети выживших во время Геноцида армян воспринимали травматическое прошлое родителей, независимо от того, как сами выжившие относились к своему прошлому – молчали и не делились своими горестными воспоминаниями, или постоянно говорили об этом – психологические последствия полученной травмы оставляли неизгладимые следы на семейной жизни и атмосфере, так же на семейных отношениях. Дети выживших во время Геноцида армян подверглись влиянию родителей. И это явление не уникально, так как еврейские ученые по Холокосту широко писали об этом и исследовали методы передачи травматических последствий на потомство выживших.

Данная статья показывает, как это психологическое состояние отражалось в литературе второго поколения армянских писателей диаспоры, их положительное или негативное отношение к родителям, такие чувства как обида, отвращение, отчуждение, благоговение, дистанция и чрезмерная зависимость, а также отклики прошлого в контексте отношений с основным обществом.

Это состояние, в сочетании с неопределенным образом утраченной родины, разжигает чувство отчуждения и подпитывается тем, что сами преступники отказываются признать свои преступления и всячески искажают историю. Основываясь на концепции Эрвина Штауба согласно которой процесс заживления травмы для армян невозможен при таком ходе событий, статья утверждает, что армянские историки будут и впредь продолжать повторять свои неопровержимые выводы и займутся более глубокими исследованиями дабы обнаружить новые факты, художники, писатели, поэты и артисты и впредь будут доказывать – то, что произошло в 1915 году не что иное, как геноцид. Потому что художественные выражения присущие второму поколению армян являются носителями душевного состояния потомков поколения, которое пережило эту трагедию. Их литература перекликается с коллективной психикой нации, которая была сформирована насилием, болью дисперсии, самообвинениями, борьбой с двойной идентичностью или поисками своей идентичности, желанием сбросить тень прошлого и его последствия в контексте настоящей и прошедшей позиции безучастного мира и преступников.

В данной статье исследованы также два важных фактора: во-первых, “паломничество” в современную Турцию в стремлении самоидентификации духовным и физическим контактом с землей предков; во-вторых роль Республики Армения в преодолении кризиса диаспоры, которая находится под угрозой ассимиляции и потери родного языка, или *linguicide*-а, что по определению Израэля Чарни является некой степенью геноцида.